ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
Վ. ԵՂԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՅԵՎ
ՆԱՅՐԱՊԱՏՈՒՅՑ ՊԱՏՐԻԱՐՔԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ
ԳԵՐԱԳՈՒՅՑՆ ՀՈԳԵՎՈՐ
ԽՈՐՀՈՒՐԴ

Թ. 545
26 Յունիսի 1929 ամի
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՅՈՒ ԲՈԼՈՐ
ԹԵՄԱԿԱԼ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Երուսաղէմի Հայոց Պատրիարք
Ամենապատիւ
Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈՒՐԵԱՆԻՆ

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ պատուէրով ուղարկումէ Ձեզ Ամենապատուութեան Հայոստանեայց Եկեղեցու բոլոր թեմական Առաջնորդներին ուղղուած շրջաբերականի մի օրինակը ի գիտութիւն եւ ի գործադրութիւն։

Անդամ Գերագոյն Հոգեւոր
Խորհրդի՝ ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Քարտուղար Ց. ԲՈԶԱՐԵԱՆ

Ս. Էջմիածինն ու Հայ Եկեղեցին՝ իր ծագման օրից մինչև այսօր՝ իր ամբողջ պատմական գոյութեան ընթացքում, միշտ կուսակցական և քաղաքական պայքարից հեռու է պահել իրեն գիտակցելով, որ ինքը հոգեւոր հայր է համայն հայ հաւատացեալ ժողովրդի եւ՝ քաղաքական կեանքի նեղ բոցէներին՝ բարոյական պարտականութիւն ունի նրա շահերի հաւատարիմ պաշտպանը հանդիսանալու։

Էջմիածինը նոյն դաւանանքն ունի նաեւ այսօր եւ նոյն սկզբունքով ղեկավարւումէ նաեւ այժմ. սակայն նկատի առնելով, որ կան կուսակցական անհատներ, յատկապէս Դաշնակցականներ, որոնք զեկեղեցին եւ եկեղեցական ժողովները փորձումեն դարձնել քաղաքական պրոպոգանդի ամբիոն եւ հակախորհրդային ելոյթներ են ունենում այնտեղ, ինչպէս վերջերս մեզ հասած տեղեկութիւններին նայելով արտասահմանի որոշ վայրերում տեղի են ունեցել եւ մեր հոգեւոր ներկայացուցիչները արգելք չեն եղել այդպիսի ելոյթներին։ Այլ եւ նկատի առնելով, որ կան անհատներ եւ խմբակցութիւններ, որոնք՝ ի սէր անհատական եւ խմբակցական նեղութական շահերի՝ տարածել եւ տարածումեն միտումաւոր եւ չարամիտ զրպարտութիւններ Էջմիածնի մասին՝ այսու յայտարարումէ, որ ինքը հեռի է որեւէ կուսակցութեան յարելուց եւ կամ որեւէ կուսակցութեան շահերը պաշտպանելուց եւ՝ առաջնորդ ունենալով Աւետարանի պատուէրը՝ «Տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ», յայտարարումէ, որ ինքը լոյալ եւ բարեացակամ է դէպի Խորհրդային Իշխանութիւնը եւ պատուիրումէ բոլոր Թեմական Առաջնորդներին եւ նոցա ենթադաս հոգեւոր Իշխանութիւններին ու հոգեւոր պաշտօնէութեան նոյնպէս լոյալ եւ բարեացակամ մնալ դէպի Խորհրդային Իշխանութիւնը եւ՝ զեկավար ունենալով եկեղեցին պետութիւնից բաժանման սկզբունքը՝ չը թոյլատրել հակապետական ելոյթներ, չօգտագործել եկեղեցական-կրօնական հանդամանքներն ու հաստատութիւնները հակախորհրդային պրոպոգանդի համար եւ յորդորել հայ հաւատացեալներին նոյն շաւղով ընթանալ, յայտարարելով որ հակառակ ընթացքը դատապարտելի եւ պատասխանատուութեան ենթակայ համարուել է եւ կը համարուի այսուհետեւ։ եւս։

Գերագոյն Հոգեւոր Խորհուրդը տարեոյս Յունիսի 12ի Թ. 34/594 ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ նախագահութեամբ զումարուած նիստի ընդունած սոյն հրահանգը ուղարկումէ ի գործադրութիւն։

Անդամ Գերագոյն Հոգեւոր
Խորհրդի ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Քարտուղար Ց. ԲՈԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@